

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ  
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Մայիս 17, 2020

SUNDAY, May 17, 2020

9215 SE Church St., Clackamas, OR 97015



## ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Յովհաննէս 9:39-10:10

Յիսուս ասաց. «Դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, եւ ովքեր տեսնում են, կուրանան»: Փարիսեցիներից ոմանք, որ Յիսուսի հետ էին, այդ լսեցին ու նրան ասացին. «Մի՞թէ մե՞նք էլ կոյր ենք»: Յիսուս նրանց ասաց. «Եթէ կոյր լինէիք, դուք մեղք չէիք ունենայ, բայց հիմա ասում էք, թէ տեսնում ենք. եւ ձեր մեղքը ձեր մէջ հաստատ է մնում»: «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով ոչխարների փարախը դռնով չի մտնում, այլ ուրիշ տեղով է բարձրանում, նա գող է եւ աւազակ. իսկ ով դռնով է մտնում, հովիւ է ոչխարների: Դռնապանը նրա համար բացում է դուռը, եւ ոչխարները լսում են նրա ձայնը. նա իր ոչխարներին անուններով է կանչում եւ նրանց դուրս է հանում: Եւ երբ իր բոլոր ոչխարներին հանի, նրանց առջեւից է գնում, եւ ոչխարները հետեւում են նրան, որովհետեւ ճանաչում են նրա ձայնը: Օտարի յետեւից չեն գնայ, այլ կը փախչեն նրանից, որովհետեւ չեն ճանաչում օտարների ձայնը»: Յիսուս նրանց այս առակն ասաց, իսկ նրանք չէին իմանում, թէ ինչ էր այն, որ նա իրենց ասում էր: Դեռ չէալ Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ես եմ ոչխարների դուռը: Բոլոր նրանք, որ յստանից առաջ եկան, գողեր էին ու աւազակներ, ուստի ոչխարները նրանց չլսեցին: Ես եմ դուռը. եթէ մէկը ինձ միջով մտնի, կը փրկուի. կը մտնի ու կ'ելնի եւ ճարակելու վրան կը գտնի: Գողը գալիս է միայն, որպէսզի գողանայ, սպանի եւ կորստեան մատնի. ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ՝ առաւել էս ունենան:



## GOSPEL READING

John 9:39-10:10


**A**nd Jesus said, “For judgment I have come into this world, that those who do not see may see, and that those who see may be made blind.”

Then *some* of the Pharisees who were with Him heard these words, and said to Him, “Are we blind also?”

Jesus said to them, “If you were blind, you would have no sin; but now you say, ‘We see.’ Therefore your sin remains.

“Most assuredly, I say to you, he who does not enter the sheepfold by the door, but climbs up some other way, the same is a thief and a robber. But he who enters by the door is the shepherd of the sheep. To him the doorkeeper opens, and the sheep hear his voice; and he calls his own sheep by name and leads them out. And when he brings out his own sheep, he goes before them; and the sheep follow him, for they know his voice. Yet they will by no means follow a stranger, but will flee from him, for they do not know the voice of strangers.” Jesus used this illustration, but they did not understand the things which He spoke to them.

Then Jesus said to them again, “Most assuredly, I say to you, I am the door of the sheep. All who *ever* came before Me are thieves and robbers, but the sheep did not hear them. I am the door. If anyone enters by Me, he will be saved, and will go in and out and find pasture. The thief does not come except to steal, and to kill, and to destroy. I have come that they may have life, and that they may have *it* more abundantly.



# ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տերտերեան



Թողութիւն շնորհող սիրոյ ովկեանն ես, Աստուած իմ, ու Քու սիրոյն մէջ իմ հոգին փրկութեան յոյսը կ'ապրի: Քու սերը՝ Աստուած իմ, Պրոպատիկէ աւագանն է, որուն ջուրերուն մէջ կը բուժես ցաւերը մարդկանց, ու փոխարէն վարդեր կը ցանես իմ էութեանս անդաստանին մէջ: Ամենողորմ եւ շնորհներ բաշխող Տեր, թողութիւն շնորհէ նաեւ ինձի, զի ամէն թողութիւն արշալոյս մըն է հոգւոյս մէջ:

Ժամանակի Տերը Դուն ես Աստուած իմ, Քեզի հետ ապրող ամէն աղօթական հոգի Քու յաւերժական ժամանակին մէջ կը հաստատէ կեանք մը, ու Քեզ հետ կը դառնայ «ժամանակ», խորհուրդ ու ստեղծագործութիւն Քու Արարչութեան, կը դառնայ պատկերը Քու փառքին: Մի մերժէր զիս Քու լուսէ յաւերժական Տաճարի աղօթասացը ըլլալ:

## PRAYER

By Archbishop Hovnan Derderian



**Grantor of forgiveness, you are the ocean of love, My Lord, God. In your love my soul lives its love. Your love, O God, is the Pool of Bethesda, where you heal people's pains and instead you plant roses in the fields of their being. Bestower of Grace, grant forgiveness also to me, as each forgiveness you grant is new dawn in my soul.**

**You are the lord of Time, my Lord, God; each soul that lives with you in time is a mystery of life; and with you, all of us become "time", mystery and creativity, simply, the image of Your Glory.**

## ՏՈՆ ՀԱՄԲԱՂՉՄԱՆ

**Յ**իսուս Քրիստոսի Համբարձման տօնը նշում է Սուրբ Յարութեան տօնից 40 օր յետոյ, 35 օրուայ շարժականութեամբ՝ ապրիլի 30-ից յունիսի 3 ժամանակահատուածի հինգշաբթի օրը: Սուրբ Յարութիւնից յետոյ Քրիստոս 40 օր մնում է երկրի վրայ եւ երեւում Իր աշակերտներին: Այդ ընթացքում Յիսուս Իր վարդապետութիւնն ուսացանում էր նրանց, իսկ վերջին հանդիպման ժամանակ օրհնում ու պատգամներ էր տալիս առաքեալներին, որից յետոյ համբարձում է երկինք: Քրիստոսի Համբարձման մասին վկայում են Ս. Մարկոս եւ Ս. Դուկաս աւետարանիչները, վկայութիւններ կան նաեւ «Գործք Առաքելոց»-ում:

Հնում Համբարձման օրուայ տօնակատարութիւններն սկսւում էին չորեքշաբթիից: Կանայք այդ օրն անուանում էին «Ծաղկամօր կիրակի»: Ծաղկամայրն, ըստ աւանդութեան, քրիստոնէայ Վարվառէ կոյսն է, ով փախչելով կռապաշտ հօրից, ապաստանում է Աշտարակի մօտ գտնուող Արայի լեռան քարանձաւում: Հայրը հետապնդում է աղջկան, գտնում, ուր նա ապաստանել էր, և սպանում դստերը: Նահատակուելուց առաջ Վարվառէն խնդրում է Աստծուց, որ ծաղիկ եւ կարմրուկ հիւանդութիւններ ունեցող մանուկները բժշկուեն իր անունով: Աստուած կատարում է նրա խնդրանքը, եւ Վարվառէի բարեխօսութիւնը խնդրող ծնողների զաւակներն ազատում են այդ հիւանդութիւններից: Այդ քարանձաւը դարձել է ուխտատեղի: Քարանձաւի պատերից մշտապէս ջուր է հոսում, որն ունի բուժիչ յատկութիւն: Ժողովուրդը հաւատացած է, որ այդ ջուրը Վարվառէ կոյսի արցունքներն են: (Աղբիւրը՝ [www.araratian-tem.am](http://www.araratian-tem.am))



# ASCENSION OF OUR LORD

The Feast of the Ascension, or *Hampartzoom*, falls on the 40th day of Eastertide, which always falls on a Thursday. The Ascension is a major event in the life of Christ. It is a sign of God's love for his Son. Through his death, resurrection and ascension, Jesus made it possible for us all to be reconciled with God. The people of the world are saved from sin and the gates to the heavenly kingdom are opened to the righteous. Through Jesus' death and resurrection, we have received new life, a life filled with the grace and love of God. Through his death, Jesus rose to a new life. He ascended into heaven after his death. He returned to his Father in his risen body and he returns to us in his risen Spirit.

The word *Ascension* means "rising to a higher place." The Feast of the Ascension commemorates our Lord's glorious rising into heaven to sit at the right hand of the Father.

The Ascension of Jesus Christ is the final act of his earthly mission of salvation. The Son of God comes down from heaven to do the work which the Father gives him to do; and having accomplished all things, he returns to the Father bearing for all eternity the wounded and glorified humanity which he has assumed.

The Ascension of Christ is seen as man's first entry into that divine glorification for which he was originally created. The entry is made possible by the exaltation of the divine Son who emptied himself in human flesh in perfect self-offering to God.

In the creed, we are told that Christ ascended into heaven in a glorified body, and will come again in the same body. This coming again refers to the Second Coming. The next time Christ comes, he will be recognizable, in the same body, but he will come as a judge of the whole world, with the glory of the Father. All will know who he is, all will be judged by him. (*Living the Armenian Church Year, New York, 2011*)



# Աւագակի մը Դարձը

Կէս գիշեր էր, Քանի մը ջահեր նետած էին իրենց դեղին լոյսը սեւ անտառին հսկայ ծառերուն դէմ մուօթ թաւուտի մը մէջ: Խումբ մը կոշտ մարդիկ, գինուած մինչեւ ակոսները, նստած էին բոլորակ, որոնց մէջէն մէկը, անուրդով ծախու ապրանքներ կը հրամցնէր իրենց: Աւագակներու խումբ մըն էին անոնք, որոնք այդ գիշեր, անկէ անցնող բեռնատար կառք մը կողոպտած էին:

Անոնց սովորութիւնը եղած էր միշտ, որ աւարը նախ իրենց մէջ ծախէին անուրդով. այսպէսով կարգ մը կարեւոր ապրանքներ ծախելէ յետոյ, կարգ եկաւ «Հաստափոր» գրքի մը. անուրդահան աւագակը բացաւ գիրքը, տեսաւ թէ՛ Ս. Գիրք մըն է, ու սկսաւ ծաղրական կատակներով իր ունկնդիրները խնդացնել:

Խումբէն մէկը առաջարկեց, որ նախ անկէ գլուխ մը կարդայ, որպէսզի կարող ըլլան գրքին արժէքը գնահատել, բոլորին հանելի թուեցաւ այս բանը, եւ վաճառող աւագակը սկսաւ բարձրաձայն կարդալ ծաղրական շեշտերով, եւ միմոսական ձեւեր ընելով իր ընկերները ֆրֆջնացնել: Անոնց մէջէն մէկը՝ սակայն, եւ ամենատարիփոտը, սովորաբար կողոպտելու մէջ առաջինը եղած էր միշտ, նստած մէկ կողմ, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր կարդացուածը:

Անոր խորհուրդները զինք տարին հեռուն, երեսուն տարիներ դէպի ետ, ընտանեկան անոյշ յարկը, ուր իր բարի հայրը նոյն այդ տեղը կարդացած էր ընտանեկան անոյշ յարկը, ուր իր բարի հայրը նոյն այդ տեղը կարդացած էր ընտանեկան աղօթքի ատեն, ճիշդ այն առաւօտը, որ ինք տունէն խոյս տուած էր, եւ ալ անկէ յետոյ Ս.Գիրք մը տեսած չէր երբեք: Անիկա յիշեց իր սիրելի մայրը, եղբայրը, քոյրերը, որ այդ նուիրական պահուն ինչպէս մտիկ կ'ընէին Աստուծոյ խօսքին ընթերցումը: Բոլորը իր աչքին առջեւ եկան, սիրտը կը մտնէր այն օրէն ասդին երբեք աղօթած չէր, մտքէն ելած էին Աստուած, աղօթք, պաշտամունք, մահ եւ յաւիտենականութիւն. Բայց այդ պահուն անոր հոգին արթնցած էր երեսուն տարիներու թմբիբէն. սրտին

սառնամանիքները սկսած էին հալիլ՝ Աստուծոյ Խօսքին թափանցող տաճունն ճառագայթներուն ազդեցութեան տակ: Միեւնոյն ատեն կը մտաբերէր իր բարի հօրն ու մօրը խրատները, որոնց դէմ անհնազանդ գտնուած էր ինք, այս խորհուրդներով տարուած էր, երբ յանկարծ, իր բով նստող ընկերները բռունցքի ուժով հարուած մը տալով ուսին, սքափեցուց: Ըսէ տեսնենք, երագող, ըսաւ ան.– որքան պիտի տաս այդ գիրքին համար, մեզմէ ոեւէ մէկէն աւելի դուն պէտք ունիս ասոր, ինչու որ մեր մէջ ամենամեծ մեղաւորը դուն ես: Այո, այդպէս եմ, ինծի տուէք եւ ինչ որ արժանի է կը վճարեմ ըսաւ ան, ու գիրքը գնեց:

Առտու եղած էր, աւագակները մօտակայ գիւղերը գացին կողոպուտը տեղաւորելու համար, իսկ ինք առանձին տեղ մը փաշուեցաւ, ժայռերու խոռոչներուն մէջ, հոն անցուց բոլոր ցերեկը ու յաջորդող գիշերը իր Ա. գրքին հետ:

Մերթ կը կարդար, մերթ կ'արտասուկէր ու կ'աղօթէր մեղքերու ննջման տակ, մերթ կը խորհէր, թէ իր մեղքերը թողութիւն գտնելէն աւելի մեծ են, բայց Աստուծոյ Խօսքը նորէն օգնութեան կը հասներ թողութեան եւ խաղաղութեան խոստումներով:

Ցորեկ մը եւ գիշեր մը, տագնապալի պահեր անցնելէ յետոյ, յաջորդ առաւօտ որոշեց այցելել մօտակայ գիւղի փարոզիչին, վիճակը անոր պարզելու համար: Արդէն վնասականօրէն հրաժարելու որոշում տուած իր ամօթալի գործունէութենէն եւ իր ընկերներէն, ու յօժար եղած էր յանձնուիլ օրէնքին արդարութեանը, ու անոր սահմանած պատիժին:

Երբ գիւղը հասաւ, այնտեղ տեղեկացաւ թէ՛ գիշերը իր աւագակախումբի ընկերները ձերբակալուած ու բանտարկուած էին զինուորական իշխանութեան կողմէ: Այս լուրը զինք աւելի զգաստացուց, եւ զօրացուց իր որոշման մէջ: Ան փարոզիչը գտաւ, պատմեց անոր իր ամբողջ կեանքին մեղսալից պատմութիւնը, գղջումն ու ապաշխարութիւնը: Քարոզիչը ուրախացաւ, փառք տուաւ Աստուծոյ ու փաշալերեց գայն-վստահեցուց անոր, թէ Տէր Յիսուս պատրաստ է ընդունելու եւ փրկելու զինքը, ինչպէս մեծագոյն մեղաւորները, ինչպէս



խաչուած աւագակը, եթէ կոտրած սրտով ու հաւատով զինք ընդունի որպէս իր միակ Փրկիչը Տէրը:

Այս բոլորը ընդունեց ու կրկին ծունկի գալով, ինքզինքը յանձնեց Տիրոջը, որմէ յետոյ խնդրեց որ իրեն ընկերանայ մինչեւ դատարան, արդարութեան ատենին յանձնելու համար ինքզինքը, ու հոն խոստովանելու իր ոնիրները եւ այդպէս ալ ըրաւ:

Ընկերները մահուան դատապարտուեցան, բայց ինք՝ իր գոյումին ու կամաւոր խոստովանութեան պատճառաւ մահուրնէ ազատեցաւ ու տասը տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ: Բանտի մէջ ցոյց տուած օրինակելի եւ փոխուած կեանքին պատճառաւ, իր բանտարկութեան շրջանը երեք տարիով կրճատուեցաւ, ընդամենը եօթը տարի բանտ մնալով արձակուեցաւ, իր մնացած տարիներուն մէջ ալ քրիստոսը ապրեցաւ ու վկայեց եւ օր մըն ալ փառաբանութիւնը իր շրթներուն վրայ փակեց աչքերը, բանալու համար զանոնք զինք փրկող Յիսուսի բով:

Սիրելի ընթերցող, ասիկա իրական դէպք մըն է: Ասոր միջոցաւ Տէրը քեզի կը խօսի, դուն որչափ ալ մեծ մեղաւոր մը ըլլաս, որչափ ալ մուրճ անցեալ մը ունեցած ըլլաս, նորէն ալ Աստուած քեզ կ'ընդունի՝ ինչպէս այս աւագակը:

Եթէ դուն գոյումով անոր դառնաս, եթէ իր Միածնի Որդին Յիսուսը ընդունիս ու հաւատաս անոր, որպէս բու Փրկիչդ, ան քեզ ալ կ'ընդունի: Մարդիկ թէեւ չեն ներեր բայց Ան կը ներէ, ինչո՞ւ. որովհետեւ կը սիրէ քեզ: Յիսուս քրիստոսի թափած անգին արիւնովը կը լուայ, կը սրբէ եւ փոխելով քեզ նոր ստեղծուած մը կ'ընէ, քեզի յաւիտեանական կեանք կու տայ: Այսպէս կ'ըսէ մը յաւիտեանական եւ կենսափոխող խօսքը.-- *«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ անոր հաւատայ չի կորսուի, այլ յաւիտեանական կեանք ունենայ»:* (Յովհ 3.16)

Աստուծոյ սէրը, ողորմութիւնը ու շնորհքը մեղքերէդ շատ աւելի մեծ է: Քու մեղքերդ որքան ալ շատ ըլլան, որքան ալ մեծ ըլլան Աստուծոյ ողորմութիւնը զանոնք ներելու եւ անգամ մըն ալ չյիշելու կարելիութիւնը ունի, եթէ հաւատաս ու խոստովանելով գոջաս ու ապաշխարհես:

## My Mom Only Had One Eye

My mom only had one eye. I hated her... She was such an embarrassment. She cooked for students and teachers to support the family.

There was this one day during elementary school where my mom came to say hello to me. I was so embarrassed.

How could she do this to me? I ignored her, threw her a hateful look and ran out. The next day at school one of my classmates said, “EEEE, your mom only has one eye!”

I wanted to bury myself. I also wanted my mom to just disappear. I confronted her that day and said, “If you’re only gonna make me a laughing stock, why don’t you just die?”

My mom did not respond... I didn’t even stop to think for a second about what I had said, because I was full of anger. I was oblivious to her feelings.

I wanted out of that house, and have nothing to do with her. So I studied real hard, got a chance to go abroad to study.

Then, I got married. I bought a house of my own. I had kids of my own. I was happy with my life, my kids and the comforts. Then one day, my Mother came to visit me. She hadn’t seen me in years and she didn’t even meet her grandchildren.

When she stood by the door, my children laughed at her, and I yelled at her for coming over uninvited. I screamed at her, “How dare you come to my house and scare my children! GET OUT OF HERE! NOW!!!”

And to this, my mother quietly answered, “Oh, I’m so sorry. I may have gotten the wrong address.” – and she disappeared out of sight.

One day, a letter regarding a school reunion came to my house. So I lied to my wife that I was going on a business

trip. After the reunion, I went to the old shack just out of curiosity.

My neighbors said that she died. I did not shed a single tear. They handed me a letter that she had wanted me to have.

“My dearest son,

I think of you all the time. I’m sorry that I came to your house and scared your children.

I was so glad when I heard you were coming for the reunion. But I may not be able to even get out of bed to see you. I’m sorry that I was a constant embarrassment to you when you were growing up.

You see.....when you were very little, you got into an accident, and lost your eye. As a mother, I couldn’t stand watching you having to grow up with one eye. So I gave you mine.

I was so proud of my son who was seeing a whole new world for me, in my place, with that eye.

With all my love to you,  
Your mother.”

